ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ. ԱԲԴԵԼ ՖԱԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019) 7-17

Արամ Գասպարյան
ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.) 18-30

Տաթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵՁՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ (2016, 2020 ԹԹ.). ԴԻՄԿՈՒՐՄՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ 31-49

Արմինե Հակոբյան
ԱԲՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՑԵՊՏԸ 50-65

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ
ԱԾԽԱԶՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 66-78

Խադիջե Ահմադ Մեհրաբի
ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՏՈՒՄ 79-86

Իրանագիտություն

Անուշ Ստամբոլցյան
ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱՂԻՀ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 87-97

Ալեն Հայրապետյանց
ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԲԱՅԱՁԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԽՈՐՀՈՒՐԴ» 98-110

Նունիկ Դարբինյան
ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՋ 111-133

Տիգրան Չանդոյան
ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 134-144

Թյուրքագիտություն

Կուրապյ Ուրազաևա, Վերոնիկա Ռազումովսկայա, Ալեքսանդր Սաֆարյան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 145-166

Արշակ Գևորգյան
ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ 167-186

Մարգարիտա Կրտիկաշյան
ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՋՅԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ 187-200

Սամվել Ռամազյան *
ԵՎՐՈՊԱՅՈՒ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ 201-223

Անի Ոսկանյան
ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 224-238

***

Ռուսլան Ցականյան
ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ, ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ) 239-247

Հովհաննես Խորիկյան
ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ 248-261

CONTENT

Arabic Studies

Gor Gevorgyan
EGYPT`S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI 7-17

Aram Gasparyan
ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF NATIONAL IDENTITY (1962-1999) 18-30

Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan
COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS 31-49

Armine Hakobyan
COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA" 50-65

Mohammed Haj Ibrahim
THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT 66-78

Khadije Ahmad Mehrabi
THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES IN THE TEXT OF THE QUR'AN 79-86

Iranian Studies

Anush Stamboltsyan
THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH" DOCTRINE 87-97

Alen Hayrapetyanc
THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION: "BLESSING OR ADVICE?" 98-110

Noonik Darbinian
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY TALES AND FOLKLORE 111-133

Tigran Candoyan
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH NATIONALISM IN THE TERRITORY OF THE REPUBLIC OF TURKEY 134-144

TurkicStudies

Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE TRANSLATIONS INTO ARMENIAN 145-166

Arshak Gevorgyan
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE: THE TURKISH DEEP STATE 167-186

Margarita Krtikashyan
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN THE TURKISH MUSIC SCENE 187-200

Samvel Ramazyan
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK) IN ARMENIAN AND TURKIC EPICS 201-223

Ani Voskanyan
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT, ADANA PROVINCE 224-238

***

Ruslan Tsakanyan
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY (EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW, ULTRA-LOW DATES) 239-247

Hovhannes Khorikyan
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA IN ACHAEMENID PERSIA 248-261

Ռուսլան Յականյան[1]

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ, ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ)

Բանալի բառեր՝ *պատմություն, ժամանակագրություն, գերերկար ժամանակագրություն, Ասորեստան, երկար ժամանակագրություն, միջին ժամանակագրություն, Բաբելոն: կարճ ժամանակագրություն, գերկարճ ժամանակագրություն*

Ժամանակագրությունն ու թվագրումները մարդկային կյանքի կարևորագույն ու անբաժանելի մասերից մեկն է: Պատմական ժամանակաշրջանից սկսած՝ այս կամ այն իրադարձության թվագրումն ու ժամանակագրական հաջորդականությունը հուզել է մարդկանց: Մարդիկ բոլոր ժամանակներում էլ ցանկացել են հետք թողնել պատմության հոլովույթում և միշտ ձգտել են ինչ-որ կերպ իրենց ներկայությունը հաստատող փաստեր թողնել՝ սկսած ժայռապատկերներից մինչև մեր օրյա մշակութային շինությունների պատերին: Դեռևս V դարում, պատմահայր Մովսես Խորենացին է նշել, որ *այն ինչ մարդն ու նրա գործերն են այն էլ պատմությունն է*, կամ *չկա պատմություն առանց ժամանակագրության*[2]:

Մինչ գիտության մեջ արդի թվագրումները, մասնագետները հիմնականում հիմնվում էին աստվածաշնչյան և անտիկ հեղինակների աշխատանքների ու թվագրումների վրա: Ակկադական սեպագիր գրի վերծանումից և Ասորեստանի արքա Աշշուրբանիպալի (*Aššur-bāni-apli*) (մ.թ.ա. 669-627թթ.) հայտնի

[1]պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող՝ rooslantsakanyan@gmail.com

[2] Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, 1991, (Բ, ՁԲ), էջ 224:

Նինվեի գրադարանի հայտնաբերումից հետո, երբ ի հայտ եկան մեծ քանակությամբ արձանագրություններ և սեպագիր վավերագրեր՝ կարճ ժամանակահատվածում ասսուրագիտությունը ձեռք բերեց գիտական բովանդակություն:

Ասորեստանյան անվանադիրների (*limu*) ցանկի[3], Բաբելոնյան ժամանակագրությունների[4] ու Պտղոմեոսյան կանոնի[5] հրատարակությունները՝ մասնագետներին լայն հնարավորություններ ընձեռեցին Ասորեստանի մ.թ.ա. 912-648թթ. պատմության գրեթե ճշգրիտ թվագրության համար:

Դեռ ավելին, Ասորեստանի արքայացանկերի[6], Վաղբաբելոնյան և Ասորեստանյան ժամանակագրությունների

[3] Millard A., The Eponyms of the Assyrian Empire 910-912 B.C., State Archives of Assyria Studies, vol. 2, Helsinki, 1994; Reade J. E., Assyrian eponyms, kings and pretenders, 648-605 BC, Orientalia, NOVA SERIES, Vol. 67, № 2, 1998, էջ 255-265; Freydank H., Beiträge zur mittelassyrischen Chronologie und Geschichte. Schriften zur Geschichte und Kultur des Alten Orients 21, Berlin, 1991, նույնի՝ Zu den Eponymenfolgen des 13. Jahrhunderts v. Dur-Katlimmu, Altorientalische Forschungen, № 32/1, 2005, էջ 45-56; Rollig W., Eponymen in den mittelassyrischen Dokumenten fus Tall Seh Hamad/Dur Katlimmu, Zeitschrift fur Assyriologie und Vorderasiatische Archeologie, № 94, 2004, էջ 18-51; Boese J., Wilhelm G., Aššur-dan I, Ninurta-apilekur und die mittelassyrische Chronologie, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, № 71, 1979, էջ 19-38, և այլք:

[4] Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Atlanta, 2004; Grayson A. K., Assyrian and Babylonian chronicles, 1975; Wiseman D. J., Chronicles of Chaldean kings (656-556 B.C.) in British museum, London, 1956:

[5] Bickerman E. J., Chronology of the Ancient World, London, 1968; Wachsmuth C., Einleitung in das Studium der altern Geschichte, Berlin, 1895.

[6] Chen Fei, Study on the Synchronistic King List from Ashur, Cuneiform Monographs, № 51, Leiden-Boston, 2020; Siddal R. L., The Genealogy of Adad-nirari III, the Identity of the Ila-kabkabis of the Assyrian King List and the Status of the 'Legitimisation' Hypothesis, Orientalia, NOVA SERIES, Vol. 76, № 4, 2007, էջ 368-378; Hägens G., The Assyrian King List and Chronology: a Critique, Orientalia, NOVA SERIES, Vol. 74, № 1, 2005, էջ 23-41; Reade J., Assyrian King-Lists, the Royal Tombs of Ur, and Indus Origins, Journal of Near Eastern Studies (այսուհետ՝ JNES), vol. 60, № 1, 2001, էջ 1-29; Grayson A. K. Konigslisten und Chroniken. B. Akkadisch, Reallexikon der Assyriologie, № 6, 1980-1983, էջ 86-135, նույնի՝ Assyrian and Babylonian King Lists, Collation and Comments, «Lišān Mitḫurti», Festschrift W. vol. Soden zum 19. 6. 1968 gewidmet von Schülern und Mitarbeitern, Kevelaer, 1969, էջ 105-119; Landsberger B., Assyrische Konigsliste und «dunkles Zeitalter», Journal of Cuneiform Studies (այսուհետ՝ JCS), № 8, 1954, էջ 31-73, 106-133; Gelb I. J., Two Assyrian King Lists, Journal of Near Eastern studies, № 4, vol.13, 1954, էջ 209-230:

հրատարակությունները[7]՝ հետագայում հնարավորություն տվեցին Ասորեստանի պատմության տարեկան ժամանակագրությունը հասցնել մինչև մ.թ.ա. 1132թ.-ը՝ մինչև ***Աշշուր-ռեշ-իշի*** (*Aššur-rēša-iši*) I (մթ.ա. 1132-1115թթ.) գահի բարձրանալը:

Ամեն դեպքում, հարկ է նշել, որ վերահիշյալ բոլոր հաշվարկները գտնվում են քննարկման փուլում և իրենց վերջնական տեսքը դեռևս չեն ստացել: Ինչևէ, Հին մերձավորարևելյան պատմության ժամանակագրության այս կամ այն թվագրության կողմնակիցները, պայմանականորեն բաժանված են հինգ խմբի՝ *գերերկար, երկար, միջին, կարճ և գերկարճ*:

Հին մերձավորարևելյան երկրների ժամանակագրական համակարգերի հիմքում ընկած է Բաբելոնիայի Ամորեական կամ Առաջին հարստության թվագրումը: Վերջինս էլ իր հերթին հիմնված է մ.թ.ա. մոտ XVI դարում, Բաբելոնիայի ամորեական արքա ***Ամմի-ծադուքի*** (*Ammi-ṣaduqa*) (մ.թ.ա. մոտ 1646-1626թթ., ըստ միջին ժամանակագրության[8]) կառավարման 6-րդ տարում՝ բաբելացի աստղագետների կողմից ***Վեներա*** (*Արուսյակ*) մոլորկի հելիական[9] արշալույսի դիտարկումների վրա[10]: Այնուամենայնիվ, խնդիրն այն է, որ Բաբելոնյան փաստաթղթում նկարագրված Վեներայի հելիական արևածագի պայմանները կրկնվում են գրեթե

[7] Մանրամասն տես՝ Glassner J.-J., նշվ. աշխ.; Grayson A. K., Assyrian and Babylonian chronicles:

[8] Ամմի-ծադուքի գահակալման թվականը ըստ երկար, միջին, կարճ ու գերկարճ թվագրումների՝ հմապատասխանաբար կիամընկնի՝ մ.թ.ա. 1702թ., մ.թ.ա. 1694թ., մ.թ.ա. 1646/1638թ., մ.թ.ա. 1582թ. և մ.թ.ա. 1550թ.:

[9] Երկնային մարմնի հելիական արշալույսը, տարվա ընթացքում, նրա առաջին արշալույսն է՝ արևածագից անմիջապես առաջ՝ Gasche H., Armstrong J. A., Cole S.W. and Gurzadyan V. G., Dating the Fall of Babylon: A Reappraisal of Second-Millennium Chronology, Mesopotamian History and Environment Series 2, Memoirs 4, Chicago: The Oriental Institute; Ghent: The University of Ghent, 1998, էջ 71-74:

[10] Reiner E., Pingree D., Babylonian Planetary Omens: Part I: The Venus Tablet of Ammisaduqa, Bibliotheca Mesopotamica 2.1, Undena Publications, 1975; Gurzadyan V. G., The Venus Tablet and refraction, Akkadica, № 124, 2003, էջ 13–17; Langdon S., Fotheringham J. K., The Venus Tablets of Ammizaduga, Oxford, 1928:

նույն ձևով յուրաքանչյուր 275 տարին մեկ: Բացի այդ, դիտարկումների գրառումը հնարավորություն է տալիս դրանք մեկնաբանել տարբեր ձևերով, ինչը հնարավորություն է տալիս դրանց կցել Վեներա մոլորակի և Արեգակի նույն կազմաձևման հարաբերակցության ավելի փոքր ցիկլեր՝ 56 կամ 64 տարի ժամկետով[11]:

Հասկանալի է, որ նման անճշտությունը Բաբելոնիայի Առաջին արքայատան իշխանության թվագրման համար՝ հետազոտողներին թույլ է տալիս ունենալ բազմաթիվ տարբերակներ: Արևելագիտության մեջ, այս կամ այն իրադարձության թվագրման համար՝ հետազոտողների կողմից պայմանականորեն ընտրվել է երկու իրադարձություն՝ Բաբելոնիայի արքա ***Խամմուրաբիի*** (մ.թ.ա. մոտ 1792-1750թթ., ըստ միջին ժամանակագրության, մանրամասը ստորև) գահակալությունն ու Խաթթիի արքա ***Մուրսիլիս I-ի*** (մ.թ.ա. մոտ 1620-1590թթ., ըստ միջին ժամանակագրության) կողմից մ.թ.ա. մոտ 1595թ.-ին Բաբելոնի գրավումը:

Հասկանալի է նաև, որ նման թվագրումները բավականին երերուն են և ամբողջությամբ հիմնված են միայն *Ամմի-ծադուքի* կառավարման 6-րդ տարում Վեներայի ծագմանը դիտարկումների գրառումների վրա: Հարկ է նշել նաև, որ առաջարկվող ժամանակագրական հաշվարկների հիմնավորման համար, հետազոտողները լայնորեն կիրառել և կիրառում են նաև հնագիտական պեղումների արդյունքում թվագրվող (*ածխածին տարրի C^{14} ռադիոակտիվ իզոտոպի կիսատրոհման պարբերությունը*) նյութերը, արքայատոհմերի ծագումնաբանական աղյուսակները, մ. թ. ա. II հազարամյակի Մերձավոր Արևելքի տարբեր երկրների արքայական ժամանակագրությունները և այլն:

[11] Gasche H., Armstrong J. A., Cole S. W. and Gurzadyan V. G., նշվ. աշխ., էջ 71-74:

Այդուհանդերձ, պետք է արձանագրել նաև, որ այդ ամբողջ նյութի համադրումը՝ հաճախ տարակարծությունների տեղիք է տալիս: Ամեն դեպքում, գոյություն ունի ևս մի կարևոր հանգամանք, ըստ որի՝ տվյալ ժամանակահատածի Հին մերձավորարևելյան ժամանակագրությունները միմյանց փոխլրացնում են:

Ինչ վերաբերվում է Ասորեստանի ժամանակագրությանը, ապա այն հենվում է Ասորեստանի արքա Աշշուր-դան (*Aššur-dān*) I-ի (մթ.ա. 1178-1132թթ.) որդիներ՝ Նինուրտա-թուկուլտի-Աշշուր (*Ninurta-tukultī-Aššur*) (մ.թ.ա. մոտ 1133/1132թ.) և Մութակկիլ-Նուսկու (*Mutakkil-Nusku*) (մ.թ.ա. մոտ 1133/1132թ.) թագավորների կառավարման տևողության խնդրի վրա, որը կախված հաշվարկներից կարող է տատանվել 1 տարուց մինչև 23 տարի[12]: Սակայն, պետք է նշել, որ այնուամենայնիվ այս թվագրությունը, որը հիմք է ընդունվել հետազոտողների մեծ մասի կողմից, նույնպես վերջնական չէ: Ինչ վերաբերում է արքայական տոհմագրություններին, ապա նրանք ունեն օժանդակող բնույթ և չեն կարող այս կամ այն իրադարձության թվագրման համար վերջնական լինել:

Ինչպես արդեն ասվեց, հնագիտական նյութերի տված արդյունքները նույնպես վերջնական չեն և չեն կարող միանշանակորեն հուսալի լինել: Օրինակ, պատմական Ալալախ քաղաքի հնավայրում կատարած պեղումների արդյունքում՝ Վ. Նագելը Մուրսիլիս I-ի կողմից Բաբելոնի գրավումը թվագրում է

[12]Ըստ Հ. Ֆրեյդանկի մ.թ.ա. 1168թ.`Freydank H., Beiträge zur mittelassyrischen Chronologie und Geschichte, էջ 30-31, 33-34, 189, հմմտ.՝ Boese J. und Wilhelm G., Aššur-dān I., Ninurta-apil-ekur und die Mittelassyrische chronologie, Wiener Zeitschrift fur die Kunde des Morgenlandes, № 79, 1979, էջ 25, 31, 38; Chen Fei, նշվ. աշխ., էջ 70-73, 199: Ասորեստանի պատմության պարբերացման համար մանրամասը տես՝ Ցականյան Ռ., Ասորեստանի պատմության պարբերացման հարցի շուրջ, Մերձավոր Արևելք, № IX-X, 2014, էջ 229-246:

մ.թ.ա. 1732թ.[13], այն դեպքում, երբ Ս. Սմիթն ու Լ. Վուլլին՝ մ.թ.ա. 1595թ.[14], իսկ Կ. Գեյթսը՝ մ.թ.ա. 1525թ.[15] մ.թ.ա. 1499թ., և այլն:

Այժմ անհրաժեշտ ենք համարում ըստ *գերերկար, երկար, միջին, կարճ և գերկարճ* ժամանակագրությունների ներկայացնել Բաբելոնիայի արքա Խամմուրաբիի գահակալման թվագրումն ու նրանց կողմնակիցներին:

Գերերկար ժամանակագրություն

Գերերկար ժամանակագրության թվագրումն ու կողմնակիցները՝

մ.թ.ա. **2318**թ.՝ Ֆ. Դելիչ[16],

մ.թ.ա. **2232/30**թ.՝ Ֆ. Թյուրո-Դանժե[17],

մ.թ.ա. **2172**թ.՝ Պ. Շնաբել[18],

մ.թ.ա. **2060**թ.՝ Լ. Քինգ[19] և Է. Մեյեր[20],

մ.թ.ա. **2051**թ.՝ Ս. Նիբուր[21], և այլք:

---

[13] Nagel W., Alalakh und siegel Kunst, JCS, vol. 12, № 4, 1958, էջ 109-115:

[14] Smith S., Alalah and Chronology, L., 1940; Woolley L., Alalakh: An Account of the Excavations at Tell Atchana in the Hatay 1937-1949, Reports of the Research Committee of the Society of Antiquaries of London, Oxford, 1955:

[15] Gates M.-H. C., Alalakh Levels VI and V: A Chronological Reassessment II, Syro-Mesopotamian Studies, № 4/2, 1981, էջ 1-50, նույնի՝ Alalakh and Chronology Again, in High, Middle or Low?: Acts of an International Colloquium on Absolute Chronology held at the University of Gothenburg, 20th-22nd August 1987, ed. P. Åström, Vol. II, Gothenburg, 1987, էջ 60-86:

[16] Delitzsch F., Die Babylonische Chronik nebst einem Anhang uber die Synchronistische Geschichte, Paris – Leipzig, 1906:

[17] Thureau-Dangin F., La chronologie de la Dynastie de Larsa, Revue d'Assyriologie et d'Archeologie Qrientale, № 15, 1918, էջ 1-58; նույնի՝ La chronologie de la premiére dynastie babylonienne (examen critique des solutions récemment proposées), Mémoires de l'Institut national de France, № XLII/2, 1951, էջ 229-258:

[18] Schnabel P., Zur astronomischen Fixierung der altbabilonischen Chronologie mittels der Venustafeln der Ammizaduga Zeit, Zeitschrift f ür Assyriologie und verwandte Gebiete, Berlin - Leipzig, № 36, 1925, էջ 109-122:

[19] King L. W., Chronicles Concerning Early Babylonian Kings, ncluding records of the early history of the Kassites and the country of the sea, Studies in East History, Vol. I, 1907.

[20] Meyer E., Geschichte des Altertums. Vol. 2: Geschichte des Abendlandes bis auf die Perserkriege, Stuttgart, 1907, էջ 324-326:

[21] Niebuhr C. Die Chronologie der geschichte Israel, Aegyptens, Babyloniens und Assyriens von 2000 – 700 vol. Chr., Leipzig, 1896:

Երկար ժամանակագրություն

Երկար ժամանակագրության թվագրումն ու կողմնակիցները՝

մ.թ.ա. **1955 կամ 1948**թ.՝ Կ. Էդեր[22],

մ.թ.ա. **1930**թ.՝ Վ. Նագել[23],

մ.թ.ա. **1898**թ.՝ Բ. Լանդսբերգեր[24],

մ.թ.ա. **1858 կամ 1842**թ.՝ Ա. Գյոտցե[25], Պ. Հապեր[26] և այլք:

Միջին ժամանակագրություն

Միջին ժամանակագրության թվագրումն ու կողմնակիցները՝

մ.թ.ա. **1801**թ. Ա. Ունգնադ[27],

մ.թ.ա. **1792**թ.՝ Ս. Սմիթ, Դ. Սիդերսկի, Լ. Վուլլի, Լ. Օպպենհայմ, Հ. Քլենգել, Թ. Բրայս, Ս. Ռիչարդսոն[28], և այլք:

Կարճ ժամանակագրություն

Կարճ ժամանակագրության թվագրումն ու կողմնակիցները՝

---

[22] Eder Ch., Assyrische Distanzangaben und die absolute Chronologie Vorderasiens, Altorientalische Forschungen, № 31, էջ 191-236:

[23] Nagel W., Alalakh und siegel Kunst, JCS, № 4, vol. 12, 1958, էջ 109-115:

[24] Landsberger B., Assyrische Konigsliste und «dunkles Zeitalter», JCS, № 1, vol. 8, 1954, էջ p. 31-73, 106-133

[25] Goetze A., The Problem of Chronology and Early Hittite History, Bulletin of the American School of Oriental Research (այսուհետ՝ BASOR), № 122, 1951. 122, էջ 18-25, նույնի՝ The Date of the Hittite Raid'on Babylon, BASOR, № 127, 1952, էջ 21-26, նույնի՝ On the Chronology of the Second Millenium B. C., Journal of Cuneiform Studies, № 11, 1957, էջ 53-73, նույնի՝ The Predecessors of Suppiluliumas of Hatti and the Chronology of the Ancient Near East, Journal of Cuneiform Studies, № 22, 1969, էջ 46-50.

[26] Huber P., Astronomical Evidence for the Long ..., Altorientalische Forschungen, № 31, 2004, էջ 5-17:

[27] Ungnad A., Eine neue Grundlage fur die aitorientalische Chronologie, № 13, 1939, էջ 145-146:

[28] Smith S., Alalah and Chronology, London, 1940; Sidersky D., Nouvelle etude sur la chronologie de la dynastie Hammurapienne, Revue d'Assyriologie et d'Archeologie Qrientale, № 37, 1940- 1941, էջ 45-54; Woolley L. A., Forgotten Kingdom: Being a Record of the Results Obtained from the Excavation of Two Mounds Atchana and AI Mina in the Turkish Hatay, Baltimore, 1953; Oppenheim L. A., Ancient Mesopotamia, Chicago, 1965; նույնի՝ Letters from Mesopotamia, Oxford, 1967; Klengel H., Geschichte des hethitischen Reiches. Leiden-Boston-Koln, 1998; Bryce T. R., The Kingdom of the Hittites, Oxford, 1998, Richardson S., The Collapse of a Complex State, A Reappraisal of the End of the First Dynasty of Babylon 1683-1597 B.C., Columbia University, 2002:

մ.թ.ա. 1730թ.՝ Ֆ. Շմիդտկե[29],

մ.թ.ա. 1728թ.՝ Վ. Օլբրայթ, Ֆ. Կորնելիուս[30], և այլք,

մ.թ.ա. 1724թ.՝ Յ. Վան դեր Մեեր, Ա. Պոեբել, Մ. Աստուր, Հ. Գաշե, Ջ. Ֆ. Արմսթրոնգ, Ս. Վ. Քոուլ, Վ. Ժ. Գյուրզադյան[31], և այլք:

Գերկարճ ժամանակագրություն

Գերկարճ ժամանակագրության թվագրումն ու կողմնակիցները՝

մ.թ.ա. 1700թ.՝ Է. Վայդներ, Ֆ. Բյոխլ, Կ. Գեյթս, Դ. Ֆ. Ուորբըրթըն[32], և այլք:

Ինչ վերաբերվում է Ասորեստանի պատմության ժամանակագրությունը, ապա մ.թ.ա. 1134թ.-ից մինչև մ.թ.ա. 605 թ.-ն ընկած ժամանակահատվածը՝ գրեթե համապատասխանում է ժամանակակից թվագրությանը:

---

[29] Scmidtke F., Der Auf Babilonian chronologie, Munchen, 1942, նույնի՝ Der Aufbau der babilonischen Chronologie, Munster, 1958:

[30] Albright W. F., A Third Revision of the Early Chronology of Western Asia, BASOR, № 88, 1942, էջ 28-36; նույնի՝ A Note on the Chronology of the Second Millennium B.C., BASOR, № 126, 1952, էջ 24-26, նույնի՝ Further Observations on the Chronology of the Early Second Millennium B.C., BASOR, № 127, 1952, էջ 27-30, նույնի՝ Stratigraphic Confirmation of the Low Mesopotamian Chronology, BASOR, № 144, 1956, էջ 26-30, նույնի՝ Further Observations on the Chronology of Alalah, BASOR, № 146, 1957, էջ 26-34; Cornelius F., Berossos und die altorientalische Chronologie, Klio, № 35, 1943, էջ 1-16, նույնի՝ Die Chronologie des Vorderen Orients im 2. Jahrtausend vol. Chr., Archiv für Orientforschung, № 17, 1954-1956, էջ 294-309, նույնի՝ Chronology. Eine Erwiderung, JCS, № 12, 1958, էջ 101-104:

[31] Meer Van der J., The chronology of Ancient Western Asia and Egypt, Leiden, 1955; Poebel A., The Second Dynasty of Isin According to a new King-List Tablet, Assyriological Studies, № 15, Oriental Institute of Chicago, 1955; Astour M. C., Hittite History and Absolute Chronology of the Bronze Age, Partille, 1989; Gasche H., Armstrong J. A., Cole S.W. and Gurzadyan V. G., նշվ. աշխ, էջ 80-83; Gurzadyan V. G., On the Astronomical Records and Babylonian Chronology, Akkadica, № 119-12, 2000, էջ 175–184, նույնի՝ The Venus Tablet and Refraction, Akkadica, № 124, 2003, էջ 13-17:

[32] Weidner E., Die Königsliste aus Chorsebed, Archiv für Orientforschung, № 14, 1941-1944, էջ 362-369, նույնի՝ Bemerkungen zur Königsliste aus Chorsebed, Archiv für Orientforschung, № 15, 1945-1951, էջ 85-102; Böhl F. M. T., King Hammurabi of Babylon in the Setting of His Time (About 1700 BC), Amsterdam, 1946; Gates M.-H. C., Alalakh Levels VI and V, էջ 1-50, նույնի՝ Alalakh and Chronology Again, էջ 60-86; Warburton D. A., Eclipses, Venus-Sycles and Chronology, Akkadica, № 123, 2002, էջ 108-114.

Այսպիսով, ելնելով վերոշարադրյալից՝ հստակորեն ասել թե մ.թ.ա. II հազարամյակի համար առաջարկվող ժամանակագրություններից որն է առավել ճշգրիտ՝ հնարավոր չէ:

CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY (EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW, ULTRA-LOW DATES)

Ruslan Tsakanyan

(Summary)

The article deals with the problems of the chronology of the history of Assyrians in the II millennium B.C. The existing points of view on the chronology of the II millennium B.C. can be divided into at least five groups. These are supporters (conditional names) of extra-long or high, long or high, medium, low or short, and ultra-low or ultra-short chronology.

It is noted that the genealogies of royal families and royal chronicles have an auxiliary character and cannot serve as an evidence base for a particular chronological scheme.

As a result, it follows from the above that it is not possible to say today which of the proposed chronologies of the II millennium BC is the closest to the truth.

ПРОБЛЕМЫ ХРОНОЛОГИИ ИСТОРИИ АССИРИИ (СВЕРХДЛИННЫЙ, ДЛИННЫЙ, СРЕДНИЙ, КОРОТКИЙ И УЛЬТРАКОРОТКИЙ ДАТИРОВКИ)

Руслан Цаканян

(Резюме)

В статье рассматривается проблемы хронологии истории Ассирии во II тыс. до н.э. Существующие точки зрения о хронологии II тыс. до н.э. можно разбить, по меньшей мере, на пять групп. Это сторонники (названия условные) сверхдлинной, длинной, средней, короткой, ультракороткой хронологии.

Отмечено, что генеалогии царских родов и царские хроники имеют вспомогательный характер и не могут служить доказательной базой для той или иной хронологической схемы.

В итоге, из вышеизложенного следует, что сказать сегодня какая из предлагаемых хронологий II тысячелетия до н.э. является наиболее близкой к истине не представляется возможным.